*Կանոնադրությունը կազմված է*
*համաձայն համահայկական 7-րդ խաղերի*
*կանոնակարգի հիմնական դրույթների*

*«Հաստատում եմ»*
*Հայաստանի աթլետիկայի*
*ֆեդերացիայի նախագահ*
*________ Ռ. Էմմիյան*
*«03» __06__ 2019թ.*

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

## ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 7-ՐԴ ԽԱՂԵՐԻ ԾՐԱԳՐՈՎ ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ

### 1. ՆՊԱՏԱԿԸ

-Նպաստել սփյուռքահայության հետ կապերի ամրապնդմանը
-Ի հայտ բերել ուժեղագույն աթլետներին

### 2. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մրցումների կազմակերպման և անցկացման ընդհանուր ղեկավարությունը իրականացնում է Համահայկական խաղերի Համաշխարհային կոմիտեն, իսկ անմիջական անցկացումը իրականացնում է Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիայի կողմից հաստատված մրցավարական հանձնախումբը:

### 3. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Մրցումները տեղի է ունենալու 2019թ. օգոստոսի 14-16-ին Արտաշատի քաղաքային ստադիոնում:

### 4. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցումները անհատական է, 4x100մ և 4x400մ փոխանցավազքերը (տղամարդիկ և կանայք) թիմային: Յուրաքանչյուր ձևում թույլատրվում է հայտավորել 3 մասնակից: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մասնակցելու 3 ձևում և փոխանցավազքում:

### 5. ԹԻՄԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Թիմի կազմը 22 մարզիկ, 2 մարզիչ և 1 ներկայացուցիչ: Ընդամենը 25 մարդ:
Ծրագիրը`

Տղամարդիկ - 100մ, 200մ, 400մ, 800մ, 1500մ, 5000մ, 4x100մ 4x400մ փոխանցավազք, հեռացատկ, եռացատկ, բարձրացատկ գնդի հրում, սկավառակի, նիզակի նետում

Կանայք – 100մ, 200մ, 400մ, 800մ, 1500մ, 4x100մ, 4x400մ փոխանցավազք, հեռացատկ, եռացատկ, բարձրացատկ, գնդի հրում, սկավառակի, նիզակի նետում

## 6. ԹԻՄԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը համաձայն Համահայկական խաղերի կանոնակարգի:

## 7. ՀԱՅՏԵՐԸ

Մրցումներին մասնակցող կազմակեպությունները հայտերը պետք է ներկայացնեն կազմկոմիտեին ըստ խաղերի կանոնակարգի Հայաստանի աթլետիկայի ֆեդերացիա մինչև ս.թ օգոստոսի 5-ը:

Մրցավարների և ներկայացուցիչների համատեղ նիստը տեղի կունենա օգոստոսի 13-ին ժամը 14:00-ին աթլետիկայի ֆեդերացիայի շենքում (ք. Երևան Զավարյան 1շենք, 1 բնակարան):